<p>է պարունակի տեղեկություններ բաժնետիրոջ և նրա ներկայացուցչի մասին (անունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը, անձնագրային կամ պետական գրանցման տվյալները): Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:</p> <p>7.20. Քվեարկությունների ժամանակ յուրաքանչյուր բաժնետեր ունի ձայնի իրավունք՝ կախված կանոնադրական հիմնադրամում իր բաժնեմասնակցության չափից:</p> <p>7.21. Ընդհանուր ժողովները նախագահում է Խորհրդի նախագահը: Եթե Խորհրդի նախագահը բացակայում է, ապա Խորհուրդը պետք է ընտրի Ընդհանուր ժողովի նախագահող:</p> <p>7.22. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը: Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:</p> <p>7.23. Արձանագրությունում նշվում են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) արձանագրության հերթական համարը (համարանիշը).</li> <li>բ) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,</li> <li>գ) Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,</li> <li>դ) Ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը,</li> <li>ե) Ընդհանուր ժողովի նախագահի, քարտուղարի անունները, ժողովի օրակարգը:</li> </ul> <p>Արձանագրությունները և որոշումները համարակալվում են եզակի համարանիշով: Արձանագրությունը պետք է պարունակի Ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրած հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները: Բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընդհանուր ժողովի արձանագրություններին:</p>	<p>General meeting;</p> <ul style="list-style-type: none"> <li>c) Total amount of distributed voting shares of the Company;</li> <li>d) The total number of votes of shareholders participating in the General Meeting;</li> <li>e) The names of the Chairman, secretary and agenda of General meeting.</li> </ul> <p>The Minutes and the decisions are numbered with unique number. The Minutes should contain the main provisions of speeches made during the General meeting, the issues put to the vote, voting results regarding the issues, and the decisions made. The shareholders are entitled to access to the minutes of General meeting.</p>
---	--

<p align="center"><b>8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ</b></p>	<p align="center"><b>8. COMPANY'S BOARD OF DIRECTORS</b></p>
<p>8.1. Ընկերության տնօրենների խորհուրդն (այսուհետ՝ Տնօրենների խորհուրդ) իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և Կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:</p> <p>8.2. Տնօրենների խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ընդհանուր ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից՝ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով:</p> <p>Տնօրենների խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ընդ որում, խորհրդի նախագահի թեկնածությունը առաջադրվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից:</p> <p>8.3. Տնօրենների խորհուրդը բաղկացած է 3 (երեք) անդամներից: Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:</p> <p>8.4. Ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Տնօրենների խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:</p> <p>8.5. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի տաս և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին: Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:</p> <p>8.6. Վերը նշված անդամների հետ միասին Ընկերության Տնօրենների խորհրդում</p>	<p>8.1. The Company's Board of Directors (hereinafter referred to as Board of Directors) performs the general management of Company's activities, except for the liabilities pertaining to the exclusive authority of the General Meeting as stipulated by the Law and the Charter.</p> <p>8.2. The Board of Directors members are elected by the Annual Meeting; or by the Extraordinary Meeting in cases of early termination of the members' as stipulated by the Law and the Charter.</p> <p>The Chairman of the Board of Directors is elected by the Board members, among Board members, with a majority of votes. Moreover, the candidacy of the Chairman is posed by "ACBA-CREDIT AGRICOLE BANK" CJSC.</p> <p>8.3. The Board of Directors consists of 3 (three) members. The liabilities of the Board of Directors members shall terminate when the next staff of the Board of Directors is elected. The total duration of the term of a Board member's liabilities is not limited.</p> <p>8.4. The General Meeting can make a decision on early termination of any of Board of Directors Member's liabilities (or of all the members) at any time.</p> <p>8.5. The shareholders of the Company who owns 10 percent or more of the Company's voting shares as of the date of drawing up the list of shareholders entitled to participate in the Meeting, may either become a Board of Directors Member without election, or appoint their representative in the staff of Board of Directors. Each shareholder may take up only one place in the Board of Directors.</p> <p>8.6. In addition of the members defined above, the Board of Directors of the Company shall</p>

ընդգրկվում է նաև Ընկերության կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի ընտրած մեկական ներկայացուցիչ (բացառությամբ այն ֆոնդերի, որոնց կանոններով (կանոնադրությամբ) սահմանված է, որ այդպիսի ներկայացուցիչ չի ընտրվում, ինչպես նաև այն պայմանագրային ֆոնդերի, որոնցում ֆոնդի ժողով չի գումարվում), որոնք Տնօրենների խորհրդի նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով, բացառությամբ, եթե դրանցում լուծվում են այն ֆոնդի հետ կապված կամ նրա շահերին առնչվող հարցեր, որի ներկայացուցիչն է խորհրդի տվյալ անդամը: Այդպիսի նիստերին վերջինս մասնակցում է Տնօրենների խորհրդի մյուս լիարժեք անդամներին հավասար ձայնի իրավունքով: Տնօրենների խորհուրդը կարող է որոշում ընդունել խորհրդի նիստին (դրա որոշակի մասին) սույն կետով նախատեսված ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների մասնակցությունը սահմանափակելու վերաբերյալ, եթե դրանում բացահայտվելու են Ընկերության համար առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ: Ընդ որում, Տնօրենների խորհրդում համապատասխան ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների բացակայությամբ չի կարող որոշում ընդունվել տվյալ ֆոնդի հետ կապված կամ նրա շահերին առնչվող հարցերի վերաբերյալ, եթե այդպիսի բացակայությունը պայմանավորված է սույն կետով նախատեսված մասնակցության սահմանափակումը կիրառելու մասին Տնօրենների խորհրդի որոշմամբ: Սույն կետով նախատեսված ֆոնդի մասնակիցների ներկայացուցիչների վարձատրությունն իրականացվում է համապատասխան ֆոնդի միջոցների հաշվին՝ ֆոնդի ժողովի սահմանած պայմաններով:

8.7. Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը պատկանում է՝

- 1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, այդ թվում՝
  - ա) ֆոնդի ստեղծման և (կամ) դրա կառավարման մասին որոշման կայացումը.
  - բ) Ընկերության ստեղծած (նրա կողմից կառավարվող) պայմանագրային ֆոնդի կանոնների և դրանցում

include a representative presented by each fund (excluding those funds, whose rules (charter) stipulate that no such representative shall be elected, as well as those contractual funds where the Fund meeting is not convened) that the manager manages, who participate in the Board of Directors' meeting with a right of consultative voting, excluding the cases when they are discussing issues concerning his interests or concerning the fund whose representative he is. In those meeting they participate with power to vote equal with the other full Board members. The Board of Directors may adopt a decision to limit the participation of the representatives envisaged in this clause in the Board meeting (in a certain part of the meeting), in cases when during that meeting information constituting commercial secret for the manager will be disclosed. Moreover, in the absence of the representative of the respective fund in the Board of Directors, the Board cannot make a decision which may concern his interests or concern the respective fund, if such absence is the result of the decision of the Board limiting the participation as stipulated by this clause. The remuneration of representatives of fund participants envisaged by this clause shall be made from the resources of the respective fund, according to the conditions of the fund's meeting

8.7. The Board of Directors shall have the exclusive right to:

- 1) determine the main directions of the Company's activities, including:
  - a) To take the decision to establish a fund and (or) on its management;
  - b) To approve the contractual fund's (established or managed by the Company) rules and the

<p>կատարված փոփոխությունների և լրացումների հաստատումը.</p> <p>գ) Ընկերության՝ որպես ֆոնդի նոր կառավարիչ հանդես գալու դեպքում այդ ֆոնդի կանոնների ընդունումը.</p> <p>դ) Ընկերության ստեղծած (նրա կողմից կառավարվող) պայմանագրային ֆոնդի պահառության պայմանագրի կնքման և դրա գործողության դադարեցման, ինչպես նաև պահառության պայմանագրի՝ պահառուի հետ փոխհամաձայնեցված փոփոխության մասին որոշման կայացումը.</p> <p>ե) Ընկերության կողմից կառավարվող պայմանագրային ֆոնդի միացման և դադարեցման մասին որոշումների կայացումը.</p> <p>զ) օրենքով նախատեսված դեպքում ֆոնդի կառավարման պայմանագրից միակողմանի հրաժարման մասին որոշման կայացումը.</p> <p>է) օրենքով և (կամ) ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի ժողովի իրավասությանը վերապահված հարցերով ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) առնվազն երկու տոկոսի սեփականատեր ֆոնդի մասնակցի (մասնակիցների)՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ այդ օրենքով սահմանված կարգով որոշման կայացումը և ֆոնդի ժողովի օրակարգի հաստատումը.</p> <p>ե) Ընկերության կողմից կառավարվող վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական իրավական ձև ունեցող ֆոնդի վերաբերյալ օրենքով կորպորատիվ ֆոնդի ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերով որոշումների կայացումը.</p> <p>2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.</p> <p>3) ժողովների օրակարգի հաստատումը.</p> <p>4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու</p>	<p>amendments and changes thereto;</p> <p>c) To approve the fund’s rules, in case the Company is acting as the fund’s new manager;</p> <p>d) To take the decision on signing and terminating the custodian agreement, as well as making amendments on a mutually agreed consignment with the custodian, for the contractual fund established by the Company (or being managed by the Company);</p> <p>e) To take the decision on merging and terminating the contractual fund managed by the Company;</p> <p>f) To take the decision on unilateral refusal from the fund management contract in cases envisaged by this Law;</p> <p>g) To approve the fund meeting’s agenda and to take the decision on the proposals made in accordance with the Law, presented by participants who are owners of at least two percent of the fund’s shares (stock), concerning issues that according to the law and (or) fund’s rules (charter) falls under the jurisdiction of the fund meeting, of a fund managed by a manager;</p> <p>h) To adopt decisions concerning issues that according to the Law fall under the exclusive jurisdiction of a corporate fund’s meeting and that concern a fund founded on trust being managed by a manager;</p> <p>2) convene Annual and Extraordinary Meetings, except for cases specified in the Law;</p> <p>3) approve the Meetings agendas;</p> <p>4) approve the date of drawing up the list</p>
--	---



տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

5) Կանոնադրության 7.3 կետի 2-րդ, 10-րդ, 13-րդ, 14-16-րդ ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն ժողովների քննարկմանը.

6) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը.

7) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

8) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

9) օրենքով սահմանված կարգով գույքի շուկայական արժեքի որոշումը.

10) Ընկերության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը և վերանայումը.

11) Ներքին աուդիտի ստորաբաժանման քանակական կազմի հաստատումը, դրա անդամների և ղեկավարի նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների հաստատումը և վերանայումը.

12) Ընդհանուր ժողովի հաստատմանը Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը, վերջինիս վճարման չափի սահմանումը.

13) Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերի արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրությունը,

14) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

15) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ

of shareholders entitled to participate in the Meeting, and resolve all those issues related to the preparation and implementation of the Meeting,

5) present to the Meetings discussion the issues stipulated in clause 7.3 sub paragraphs 2, 10, 13, 14-16 of the Charter;

6) increase the Company's chartered capital through increase of nominal value of the shares or distribution of additional shares;

7) make a decision on acquisition and redemption of shares, bonds and other securities issued by the Company in cases stipulated by the Law;

8) distribute bonds and other securities;

9) determine the market price of property as stipulated by the Law;

10) appoint the Executive Officer, Deputy-Executive officers of the Company, to terminate prematurely their powers, to review and approve the terms and conditions of their remuneration and compensations;

11) approve the quantitative staff of the Internal audit, to appoint the members and the Head of the internal audit, to terminate prematurely their powers, to review and approve the terms and conditions of their remuneration and compensations;

12) present the external auditor of the Company to the approval of General meeting and to determine the size of its remuneration;

13) approve the external auditor of the Funds managed by the Company;

14) submit proposals to the General Meeting regarding the size and payment procedure of annual dividends;

15) determine the size and payment procedure of interim (quarterly or semi-

<p>կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.</p> <p>16) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.</p> <p>17) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.</p> <p>18) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.</p> <p>19) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը.</p> <p>20) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.</p> <p>21) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.</p> <p>22) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.</p> <p>23) Ընկերության այն գործարքի կնքման մասին որոշման կայացում, որոնցում առկա է շահագրգռվածություն, եթե օրենքով այդ իրավասությունը վերապահված չէ Ընդհանուր ժողովին.</p> <p>24) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.</p> <p>25) Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրի (Բիզնես պլանի), ամենամյա ծախսերի նախահաշվի (բյուջեի) և դրա կատարողականի հաստատումը.</p> <p>26) օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:</p> <p>8.8. Տնօրենների խորհրդի նիստերը գումարում է Տնօրենների խորհրդի նախագահին իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ներքին աուդիտի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, գործադիր տնօրենի և Ընկերության 10 (տասը) և ավելի տոկոս բաժնետոմսեր ունեցող բաժնետիրոջ պահանջով:</p> <p>Այն դեպքում, երբ Տնօրենների խորհրդի</p>	<p>annual) dividends;</p> <p>16) use the Company’s reserve and other funds;</p> <p>17) approve the internal documents regulating the activities of management bodies;</p> <p>18) create subsidiaries and dependent companies, approve the participation in subsidiaries and dependent companies, if such participation does not constitute a major transaction;</p> <p>19) establish or to participate in holding companies and other associations of commercial organizations;</p> <p>20) create Company branches, representative offices, and institutions;</p> <p>21) participate in other organizations, unless such participation constitutes a major transaction;</p> <p>22) sign major transactions connected with alienation and acquisition of Company property in cases stipulated by the Law;</p> <p>23) make decision on transactions where a Conflict of Interests exists, unless it falls under the exclusive jurisdiction of the General Meeting;</p> <p>24) approve the administrative-organizational structure of the Company;</p> <p>25) approve the Company’s strategic-development program (Business plan), the annual estimate of expenses (the budget) and its execution;</p> <p>26) resolve other issues stipulated by the Law and the Charter.</p> <p>8.8. The meetings of the Board of Directors are called by the Chairman of the Board of Directors at his initiative, upon a request of a a Board of Directors Member, of the Internal Audit, of the Company’s external auditor, of the Executive Officer and of a shareholder holding 10 (ten) or more percent of shares.</p>
---	--

<p>Նախագահն ի վիճակի չէ կամ որպես Տնօրենների խորհրդի նախագահ չի կատարում իր պարտականությունները որոշակի կամ անորոշ ժամանակով, ապա նրա պարտականությունները կարող են իրականացվել Խորհրդի որևէ այլ անդամի կողմից՝ մյուս անդամների համաձայնությամբ:</p> <p>8.9. Եթե Տնօրենների խորհրդի նախագահը ի վիճակի չէ կամ որպես Տնօրենների խորհրդի նախագահ չի կատարում իր պարտականությունները 3 ամսից ավել, ապա ընտրվում է նոր նախագահ՝ Կանոնադրության 8.2 կետով սահմանված ընթացակարգի համաձայն: Տնօրենների խորհրդի նիստի գումարման ժամանակը և վայրը որոշում է Տնօրենների խորհրդի նախագահը:</p> <p>8.10. Տնօրենների խորհրդի նիստի օրակարգը հաստատում է Տնօրենների խորհրդի նախագահը՝ հիմք ընդունելով նիստի գումարում պահանջած անձի առաջարկը և ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջները:</p> <p>8.11. Տնօրենների խորհրդի նախագահը պարտավոր է Խորհրդի նիստից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ պատվիրված նամակով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն նիստի վերաբերյալ ծանուցել Տնօրենների խորհրդի անդամներին՝ կից ներկայացնելով Խորհրդի նիստի օրակարգը և նիստի համար պահանջվող նյութերը:</p> <p>8.12. Տնօրենների խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե Տնօրենների խորհրդի նիստին մասնակցում են առնվազն քվեարկելու իրավունք ունեցող անդամների կեսը:</p> <p>8.13. Տնօրենների խորհրդի նիստերը վարում է Տնօրենների խորհրդի նախագահը:</p> <p>8.14. Տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:</p> <p>8.15. Տնօրենների խորհրդի նիստերը</p>	<p>In the event that the Chairman of the Board is unable or fails to perform his/her duties as Chairman of the Board for a temporary or indefinite period, his/her duties may be performed by any other Board member. Should the Chairman be unable and fail to perform his/her duties as Chairman of the Board for more than 3 months, a new Chairman shall be elected as per the procedure described in the clause 8.2.</p> <p>8.9. The date and place of the Board of Directors meeting are determined by the Chairman of the Board of Directors.</p> <p>8.10. The agenda of a Board of Directors meeting is approved by the Chairman of the Board of Directors based on proposals of the person requesting a Board meeting and the requirements of the RA legislation, the Charter and the internal acts of the Company.</p> <p>8.11. The Chairman shall notify the Board Members about convening a Board meeting via registered mail, e-mail or personal handing at least 3 (three) days prior to the meeting and to provide enclosed the agenda and other requested documents.</p> <p>8.12. The Board of Directors is eligible (has quorum), if more than half of the members having the right to vote participate at the meeting of the Board of Directors .</p> <p>8.13. The meetings of the Board of Directors are presided by the Chairman of the Board.</p> <p>8.14. The Board of Directors decisions are adopted by a majority of votes of the Members who were present at the meeting. In the vote, each Member of Board of Directors shall have one vote. A Member the Board of Directors may not transfer his/her vote and voting right to another Member of the Board of Directors (or anyone else). The Chairman of the Board of Directors shall be entitled to a decisive vote.</p>
---	---

<p>կարող են գումարվել հեռակա (հարցման) կարգով՝ Տնօրենների խորհրդի նախագահի կողմից հաստատված քվեաթերթիկների օգտագործմամբ կամ էլեկտրոնային քվեարկությամբ: Հեռակա (հարցման) կարգով նիստ անցկացնելիս նիստի վերաբերյալ ծանուցումը՝ կից նյութերով և քվեաթերթիկներով, Խորհրդի նախագահը պատվիրված նամակով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն ներկայացնում է Տնօրենների խորհրդի անդամներին՝ հաստատված քվեաթերթիկները Տնօրենների խորհրդի անդամներից ընդունելու համար սահմանված օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:</p>	<p>8.15. The meetings of the Board of Directors can be convened by correspondence voting (in absentia) by the use of voting papers approved by the Chairman or by electronic voting. In case the Board session is convened by correspondence voting the Chairman provides the Board members with the notification, voting papers and enclosed documents via registered mail, e-mail or personal handing at least 3 (three) days prior to the date when the voting papers approved by the Board Members shall be sent back.</p>
<p>8.16. Տնօրենների խորհրդի նիստերը կարող են գումարվել նաև այնպիսի կարգով, երբ որոշ անդամներ մասնակցում են առկա կարգով, իսկ մյուսները՝ հեռակա: Այդ դեպքում Խորհրդի անդամի նկատմամբ պետք է կիրառվի Կանոնադրությամբ սահմանված համապատասխան կարգը:</p>	<p>8.16. The meetings of the Board of Directors can be convened in a way when some of the Board Members participate in person and the others participate by correspondence voting. In that case the relevant regulation of the Charter shall be applied for each Member.</p>
<p>8.17. Տնօրենների խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Տնօրենների Խորհրդի անդամները հաղորդակցվում են միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացվող նիստ չի համարվում:</p>	<p>8.17. The Board of Directors can make decisions at a meeting where the participants of the Board meeting can communicate with each other through telephone, TV connection or other means of communications in real time. Such a meeting shall not be considered as held by correspondence (in absentia).</p>
<p>8.18. Տնօրենների խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում: Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցած բոլոր Խորհրդի անդամները, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա ճշտության և հավաստիության համար:</p>	<p>8.18. The meetings of the Board of Directors are recorded. The minutes of the meeting are drawn up within 5 days after the meeting is over. The minutes of the Board meeting shall be signed by all the Board members participated at the meetings who bear the responsibility for trustworthiness and correction of information available in the minutes.</p>
<p>8.19. Հեռակա կարգով անցկացվող Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է օրակարգի հարցերի վերաբերյալ քվեարկությունների հիման վրա:</p>	<p>8.19. The minutes of the Board meeting held by correspondence voting are drawn up on the basis of voting on the agenda issues.</p>
<p>8.20. Արձանագրությունում նշվում են՝ ա) արձանագրության հերթական համարը (համարանիշը). բ) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը. գ) նիստին մասնակցած անձինք.</p>	<p>8.20. The following information shall be mentioned in the Minutes: a) consecutive number of the Minutes,</p>

<p>դ) նիստի օրակարգը. ե) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի. զ) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները. է) նիստում ընդունված որոշումները: Արձանագրությունները համարակալվում են եզակի համարանիշով:</p> <p>8.21. Ընկերությունը վարում է Տնօրենների խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Ընկերության բաժնետերերի ծանոթացման համար և պարունակում է խորհրդի անդամների մասին օրենքով սահմանված տեղեկությունները:</p>	<p>b) the date, the time and the place of convening the Board meeting; c) participants of the Board meeting; d) the agenda of the Board meeting; e) the issues put to a vote as well as the voting results for each member of the Board, attended the meeting; f) the opinions of Board members and the persons attending the Board meeting regarding the issues put to vote; g) the decisions made during the Board meeting.</p> <p>The Minutes are enumerated with unique numbers.</p> <p>8.21. The Company maintains a registry of Board members, which is accessible for the Company shareholders and contains the data on Board members as stipulated by the law.</p>
<p><b>9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ</b></p> <p>9.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության Գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Գործադիր տնօրենը կամ Գործադիր տնօրենի տեղեկալը կարող է Ընկերության անունից իրականացնել Ընկերության ֆոնդի(երի) կառավարման գործունեություն:</p> <p>9.2. Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:</p> <p>9.3. Գործադիր տնօրենը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.</li> <li>2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.</li> </ol>	<p><b>9. COMPANY'S EXECUTIVE OFFICER</b></p> <p>9.1. Management of current operations of the Company is carried out by the Executive Officer of the Company. The Executive Director may have Deputies. The Executive Director is appointed by the Board, the Deputies of the Executive Officer are appointed by the Board by presentation of Executive Officer. The Executive Officer or the Deputy Executive Director may carry out the Fund Management activity of Company's Fund (s) on behalf of the Company.</p> <p>9.2. The Executive Officer of the Company is authorized to decide on all the Company's current managerial issues, except for the issues pertaining to the exclusive authority of the General Meeting and Board of Directors as stipulated by the Law and the Charter.</p> <p>9.3. The Executive Officer:</p> <ol style="list-style-type: none"> <li>1) manages the Company's property, including the financial means, and signs transactions on behalf of the Company;</li> <li>2) represents the Company in the</li> </ol>

<p>3) գործում է առանց լիազորագրի. 4) տալիս է լիազորագրեր. 5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային. 6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ. 7) Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը. 8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը. 9) Հաստատում է Ընկերության հաստիքացուցակը. 10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին: Ընդ որում, Գործադիր տնօրենը, իր իրավասությունների սահմաններում, կարող է ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց նշանակումը ներկայացնել խորհրդի հաստատմանը). 11) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ. 12) կատարում է Գործադիր տնօրենի տեղակալների միջև պարտականությունների բաշխումը. 13) կազմակերպում է Ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի որոշումների և հանձնարարականների կատարումը:</p>	<p>Republic of Armenia and abroad; 3) acts without a power of attorney; 4) issues powers of attorney; 5) signs contracts, as designated, including labor contracts; 6) opens Company bank accounts (including foreign currency) and other accounts; 7) submits to the Board of Directors' approval the internal labor regulation of the Company, the regulations of separated subdivisions, the administrative-organizational structure of the Company; 8) within his/her competencies issues orders, gives instructions, gives mandatory instructions for execution and oversees their implementation; 9) approves the Company's staff list; 10) in the established manner, recruits and dismisses the Company's employees staff. Meanwhile, the Executive Director, within its competence, may present to the Board of Directors' approval the validation of Key persons. 11) applies the means of encouragement and disciplinary responsibility to the employees; 12) performs the distribution of responsibilities between the Deputy Executive Directors; 13) organizes the implementation of the General Meeting's and the Board of Directors' decisions and recommendations.</p>
<p><b>10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ</b></p> <p>10.1. Ընկերությունն ունի ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում (այսուհետ՝ Ներքին աուդիտ), որի աշխատակիցներն անկախ են: Տնօրենների խորհրդի որոշմամբ Ներքին աուդիտի գործառնությունները պայմանագրով</p>	<p><b>10. COMPANY'S INTERNAL AUDIT</b></p> <p>10.1. The Company has an independent division of internal audit (hereafter, “internal audit”), whose employees are independent. The functions of Internal audit can be</p>

<p>կարող է պատվիրակվել անկախ աուդիտորին:</p> <p>10.2. Ներքին աուդիտոր չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև Ընկերության, դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:</p> <p>10.3. Ներքին աուդիտը պետք է հնարավորություն ունենա ապահովելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ: Ներքին աուդիտն իր իրավասություններն իրականացնելիս անկախ է և հաշվետու է Տնօրենների խորհրդին:</p> <p>10.4. Ներքին աուդիտը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ.</li> <li>2) ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով, ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին.</li> <li>3) տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:</li> </ol> <p>10.5. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:</p> <p>10.6. Յուրաքանչյուր տարի Տնօրենների խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, որն առնվազն ներառում է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում.</li> <li>2) առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը:</li> </ol> <p>10.7. Գործադիր տնօրենը պարտավոր է ապահովել բավարար պայմաններ ներքին աուդիտի իրավասությունների արդյունավետ իրականացման համար:</p> <p>10.8. Ներքին աուդիտը պարտավոր է</p>	<p>delegated to an independent auditor by a decision of the Board of Directors.</p> <p>10.2. The Company’s management body of the Company, another director and employee, as well as any person affiliated with the Company, its directors or other employees cannot be Internal auditor.</p> <p>10.3. The internal audit shall have the capability to ensure an efficient internal control system. Internal audit shall be independent while exercising its activities and shall reports to the Board of Directors.</p> <p>10.4. The internal audit:</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Controls current activity and risks of the Company;</li> <li>2) Checks the compliance of the Company’s activity with the requirements set forth by law, regulations, regulated market rules, business rules of the company and other legal acts;</li> <li>3) gives conclusions and presents proposals on issues presented by the authorized management bodies and on other issues.</li> </ol> <p>10.5. The decision-making of issues under the competence of the internal audit cannot be transferred to the management bodies of the Company or to other parties.</p> <p>10.6. The Board of Directors shall, each year, approve the annual plan of internal audit. The annual plan shall include at least the following:</p> <ol style="list-style-type: none"> <li>1) The areas of operation where the internal audit shall be performed;</li> <li>2) A description of the content of planned audit.</li> </ol> <p>10.7. Executive Officer of the Company must ensure sufficient conditions for effective implementation of the internal audit’s activities.</p> <p>10.8. Internal audit is obligated to inform the Company’s Board of Directors, Executive</p>
---	---

<p>Ունեւորւոյան կողմից օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած խախտման, ինչպես նաև ֆոնդի մասնակիցների և (կամ) հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին դրանց հայտնաբերման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Տնօրենների խորհրդին, Գործադիր տնօրենին և տեղակալներին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկին:</p>	<p>Officer and Deputies, as well as the Central Bank of RA about any violation of the requirements set forth the by law, other legal acts, as well as about any significant damage caused to the interests of customers, within 5 working days from the moment of detection.</p>
<p align="center"><b>11. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ</b></p> <p>11.1. Կանոնադրւոյունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Լեզուների միջև հակասւոյան դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը:</p> <p>11.2. Կանոնադրւոյունն ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:</p>	<p align="center"><b>11. FINAL PROVISIONS</b></p> <p>11.1. The Charter is made in English and Armenian languages. In case of discrepancies between two languages Armenian version shall prevail.</p> <p>11.2. The Charter enters into force after its registration by the Central Bank.</p>

Jean  
Mazedjian

Digitally signed by Jean Mazedjian  
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan,  
o="AMUNDI-ACBA ASSET  
MANAGEMENT" CJSC,  
email=infoarmenia@amundi.com,  
cn=Jean Mazedjian  
Date: 2018.05.31 15:06:52 +04'00'